ՀՈՒՇԱԳԻՐ

«ԲԻԶՆԵՍ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄԻ,
«ԲԻԶՆԵՍ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ,
ԵՎ
«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋԻ (ՊՈԱԿ)»
ՄԻՋԵՎ

ք. Երևան **«30» մարտ, 2023թ.**

«Բիզնես և Կրթություն Ասոցիացիա» հասարակական կազմակերպություն (այսուհետ՝ Ասոցիացիա), ի դեմս Ասոցիացիայի նախագահ Մարինե Ժամկոչյանի
«Բիզնես և կրթություն գործընկերություն» հիմնադրամը (այսուհետ՝ Հիմնադրամ),
ի դեմս տնօրեն Դավիթ Կարապետյանի,

և

«Գորիսի Պետական Քոլեջ ոչ առևտրային կազմակերպություն (ՊՈԱԿ)» (այսուհետ՝ Քոլեջ), ի դեմս քոլեջի տնօրեն Կարեն Լազարյանի

միջև

(երեքը միասին այսուհետ՝ Կողմեր)

Հաշվի առնելով Հիմնադրամի և Ասոցիացիայի կողմից կրթության ոլորտում իրականացվող ծրագրերը և դրանց շրջանակում

Նպատակ ունենալով զարգացնելու համագործակցությունը նախնական և միջին մասնագիտական կրթության և կադրերի պատրաստման ոլորտում,

կնքեցին սույն Հուշագիրը հետևյալի մասին.

1. ՀՈՒՇԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, կանոնադրական փաստաթղթերով և սույն Հուշագրով սահմանված իրենց իրավասությունների շրջանակներում՝ միմյանց համարելով ռազմավարական գործընկերներ և ուղղելով իրենց ջանքերը կրթական, ուսումնական և նորարարական ոլորտներում համագործակցության զարգացմանը:

1.2. Կողմերի համագործակցությունը սույն Հուշագրի իրականացման շրջանակներում՝ կատարվում է կամավոր հիմունքներով՝ ղեկավարվելով շահերի ընդհանրության, գործողությունների համաձայնեցվածության և կառուցողական համագործակցության սկզբունքներով:

1.3. Միմյանց համարելով ռազմավարական գործընկերներ՝ ուղղելով իրենց ջանքերը կրթական, ուսումնական և նորարարական ոլորտներում համագործակցության զարգացմանը:

1.4. Կողմերի նպատակն է համագործակցության զարգացումը, ջանքերի միավորումը և համակարգումը հետևյալ հարցերի շուրջ.

- կրթության և տնտեսության միջև համագործակցության ամրապնդմանն ուղղված ծրագրերի իրականացում, նախնական և միջին մասնագիտական կրթության նորմատիվ իրավական բազայի և նախնական և միջին մասնագիտական կրթության կրթական ծրագրերի մշակումը և կատարելագործումը,
- արհեստագործական մասնագիտությունների գծով կադրերի պատրաստմամբ զբաղվող ուսումնական հաստատությունների ուսումնամեթոդական և նյութատեխնիկական բազայի ամրապնդումը,
- աշխատանքի շուկայում շրջանավարտների մրցունակության բարձրացմանը, արհեստագործական ոլորտները որակավորված մասնագետներով և աշխատողներով ապահովելուն ուղղված համատեղ միջոցառումների կազմակերպումը,
- մասնագիտական կողմնորոշմանն ուղղված միջոցառումների իրականացումը,
- կրթական հաստատությունների և գործող կառույցների համագործակցության ձևավորումն ու ամրապնդումը:

2. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1. Հիմնադրամի և Ասոցիացայի պարտականություններն են.

2.1.1. Ցուցաբերել օժանդակություն՝ նախնական և միջին մասնագիտական կրթության ուսումնական հաստատություններում նոր մասնագիտությունների ներդրմանը,

2.1.2. Աջակցել դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման և ստաժավորման դասընթացների կազմակերպմանը և իրականացմանը,

2.1.3. Նպաստել մասնագիտական կադրերի վերապատրաստման համատեղ սեմինարների, քննարկումների, հանդիպումների և խորհրդատվությունների կազմակերպմանը,

2.1.4. Համապատասխան մասնագիտությունների գծով կադրեր պատրաստող մասնագիտական կրթական հաստատությունների հետ համատեղ օժանդակել սովորող երիտասարդների շրջանում մասնագիտական կողմնորոշման աշխատանքների կազմակերպմանը,

2.1.5. Օժանդակել կրթության և տնտեսության համագործակցության ամրապնդմանը,

2.1.6. Աջակցել կրթության զարգացմանը՝ գործնական աշխատանքների հիման վրա (աշխատանքի վրա հիմնված ուսուցում),

2.1.7. Իրականացնել համատեղ ծրագրերի, միջոցառումների, դասընթացների մոնիտորինգ և գնահատում,

2.1.8. Իրականացնել տեղեկատվական-վերլուծական, ուսումնական և խորհրդատվական գործունեություն,

2.1.9. Օժանդակել երիտասարդների՝ աշխատաշուկա մուտք գործելուն՝ ապահովելով բարձր որակավորում, ինչպես նաև ուղղորդելով դեպի կազմակերպություններ, որտեղ կա պահանջարկ:

2.2. Քոլեջի պարտականություններն են.

2.2.1. Մշակել հատուկ ծրագրեր՝ մասնագիտական դասընթացները մատչելի և հասանելի դարձնելու համար՝ ներդնելով դասընթացների կազմակերպման առանձնահատուկ մեխանիզմներ, կազմել այդպիսի մեխանիզմների ներդրման և կառավարման ընթացակարգ,

2.2.2. Իրականացնել տեղեկատվական-վերլուծական, ուսումնական և խորհրդատվական գործունեություն,

2.2.3. Իրականցնել հարցումներ համատեղ ծրագրերի շրջանակում,

2.2.4. Համատեղ Ծրագրերը իրականացնել Հիմնադրամի անմիջական հսկողությամբ և ուղղորդմամբ,

2.2.5. Աջակցել դասախոսների և արտադրական ուսուցման վարպետների վերապատրաստման, ինչպես նաև նորարարական տեխնոլոգիաներ պարունակող որակավորման բարձրացման դասընթացների կազմակերպմանը,

2.2.6. Օժանդակել արհեստագործական մասնագիտությունների գծով մասնագետների նպատակային նախապատրաստմանը և հմտությունների զարգացմանը,

2.2.7. Աջակցել ուսուցման որակի բարելավման նպատակով Հիմնադրամի կողմից մշակված և ՀՀ Կառավարության հետ նախապես համաձայնեցված ուսումնական ձեռնարկների՝ ՀՀ ուսումնական հաստատություններում ներդրմանը,

2.2.8. Աջակցել մասնագիտական կադրերի վերապատրաստման համատեղ սեմինարների, քննարկումների, հանդիպումների և խորհրդատվությունների կազմակերպմանը,

2.2.9. Տրամադրել տեղեկատվություն, համատեղ ծրագրերի իրականացման, ուսանողների մասնագիտական կողմնորոշման, գործնական ուսուցման բովանդակության, տևողության և դրա իրականացման անհրաժեշտ պայմանների ապահովման և այլնի վերաբերյալ,

2.2.10. Հնարավորություն ընձեռել այլ կրթական հաստատությունների ուսանողների և ուսուցիչների օգտվել համատեղ Ծրագրի հնարավորություններից,

2.2.11. Ուսանողների համար կազմակերպել տեղեկատվական հանդիպումներ և ճանաչողական այցեր,

2.2.12. Տրամադրել տեղեկատվություն ոլորտային սեմինարների, կոնֆերանսների և այլ միջոցառումների վերաբերյալ,

2.2.13. Հրապարակումներ անել սոցիալական ցանցերում, նշելով Հուշագրի կողմերին,

2.2.14. Հարգել Կողմերի բրենդինգի քաղաքականությունը (օրինակ՝ լոգոների տեղադրում մասնակիցների գրանցման ցուցակների և այլ փաստաթղթերի վրա),

2.2.15. Իրականացնել Հուշագրի նպատակներից բխող այլ անհրաժեշտ գործողություններ:

3. ՀՈՒՇԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

3.1. Սույն Հուշագիրը կնքվում է անորոշ ժամկետով և ուժի մեջ է մտնում եռակողմ ստորագրման պահից:

3.2. Կողմերից յուրաքանչյուրը իրավասու է հրաժարվել Հուշագրի կատարումից, ուղարկելով մյուս Կողմին իր այդ մտադրության վերաբերյալ գրավոր ծանուցում ոչ ուշ, քան հրաժարվելուց երեք ամիս առաջ, կարգավորելով Հուշագրի գործողության ընթացքում առաջացած պարտականությունների իրականացման կարգը:

3.3. Կողմերի փոխադարձ համաձայնությամբ սույն Հուշագրում հնարավոր է կատարել Հուշագրի անբաժանելի մասը կազմող փոփոխություններ և լրացումներ՝ լրացուցիչ համաձայնագիր ստորագրելու միջոցով:

4. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

4.1. Կողմերը համագործակցում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ հիմնվելով փոխադարձ հարգանքի, հավասար իրավունքների, գործընկերության սկզբունքների վրա,

4.2. Սույն Հուշագիրը չի ազդում Կողմերի մասնակցությամբ այլ պայմանագրերից բխող Կողմերից յուրաքանչյուրի իրավունքների և պարտականությունների վրա և Կողմերի միջև չի առաջացնում որևէ գույքային և/կամ ֆինանսական պարտականություն,

4.3. Սույն Հուշագրի շրջանակում կողմերի քաղաքացիաիրավական գործարքի բնույթ կրող փոխհարաբերությունները (փոխհաշվարկները) միմյանց միջև և /կամ երրորդ անձանց հետ, պետք է ձևակերպած լինեն առանձին պայմանագրերով ՀՀ գործող օրենսդրության համաձայն,

4.4. Սույն Հուշագրի պայմանները և Հուշագրի հետ փոխկապակցված այլ անձի հրապարակման ոչ ենթակա գործունեության մասին տեղեկատվությունը գաղտնի է: Կողմերը պարտավորվում են չբացահայտել նման տեղեկատվությունը այլ անձանց և այն չօգտագործել սույն Հուշագրի իրացման հետ կապված որևէ նպատակով,

4.5. Հուշագիրը կազմված է հայերեն: Հուշագիրը կնքվում է հավասարազոր իրավաբանական ուժ ունեցող երեք օրինակից: Կողմերից յուրաքանչյուրին տրվում է Հուշագրի մեկ օրինակ:

5. ԿՈՂՄԵՐԻ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«ԲԻԶՆԵՍ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԳՈՐԾԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄ

Տնօրեն՝

Դ. Կարապետյան

«ԲԻԶՆԵՍ ԵՎ ԿՐԹՈՒԹՅՈՒՆ ԱՍՈՑԻԱՑԻԱ» ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ

Նախագահ՝

Մ. Ժամկոչյան

«ԳՈՐԻՍԻ ՊԵՏԱԿԱՆ ՔՈԼԵՋ»

Տնօրեն՝ Կ. Լազարյան